

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է "2025Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆԸ

"2025Թ. ՀՀ լավագույն հաշվապահ" անվանակարգում հայտարարված մրցույթը երկար տարիների փորձ ունի: Այն մեր հանրապետությունում միակ մրցույթն է, որը մեկնարկել է դեռևս 2005Թ. -ից և ունի արդեն ավելի քան 20 տարվա կենսագրություն: Մրցույթն իրավամբ համարվում է "ՀՀ լավագույն հաշվապահ", որովհետև դրան մասնակցում են մեր երկրի բոլոր տարածաշրջանների հաշվապահական հաշվառմամբ զբաղվող մասնագետները, հաշվապահները, աուդիտորները, ուսանողները: Հետաքրքիրն այն է, որ մրցույթին երբեմն մասնակցում են նաև գործատուները և, որքան էլ զարմանալի լինի՝ դատավորները:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

"ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

Այսուհետ մրցույթին ներկայացված առաջադրանքներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների նկարները, անունը, ազգանունը կտեղադրվեն ամսագրում՝ առանց նշելու հավաքած միավորների թիվը: Մյուս մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը կտեղադրվի www.gortsq.am կայքէջի համապատասխան խորագրի ներքո:

"2025Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ՄՐՑՈՒՅԹԻ

16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ

I ՓՈԽԼ

Մեկնարկում է "2025Թ. ՀՀ լավագույն հաշվապահ" անվանակարգում հայտարարված մրցույթի 16-րդ պարբերաշրջանի ընտրական 1-ին փուլը, որին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են մեկական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդիրն ունի երկու պատասխան: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Առաջին փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների անունը, ազգանունը կտպագրվի ամսագրի հաջորդ համարում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2025թ. ապրիլի 27-ը: Հարցաշարի և խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2025թ. ապրիլի 28-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

"2025Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"
ՄՐՑՈՒՅԹԻ 16-ԴՆ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈԽԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. ԱԱՀ վճարով ՀՀ ռեզիդենտ ոչ առևտրային կազմակերպությունը ֆիզիկական անձին վճարել է անհատույց եկամուտների բնամթերային տեսքով, ի՞նչ հարկեր կարող են առաջանալ.

- ա. ԱԱՀ և եկամտային հարկ,
- բ. շահութահարկ և եկամտային հարկ,
- գ. միայն ԱԱՀ,
- դ. միայն եկամտային հարկ:

Հարց 2. ՀՀ ոչ ռեզիդենտ ընկերությունը, որը ՀՀ-ում գործունեություն է իրականացնում մշտական հաստատության միջոցով, կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, թե ոչ.

- ա. այո,
- բ. ոչ:

Հարց 3. ՀՀ ոչ ռեզիդենտ ընկերությունը, որը ՀՀ-ում գործունեություն է իրականացնում մշտական հաստատության միջոցով, եթե ԱԱՀ-ով հարկվող գործարք է կատարում, ԱԱՀ-ն վճարում է.

- ա. գործարքի կողմ համարվող ՀՀ ռեզիդենտ ընկերությունը,
- բ. ոչ ռեզիդենտ ընկերությունը,
- գ. նշված գործարքը չի կարող հարկվել ԱԱՀ-ով:

Հարց 4. Հիմնական արտադրությունում զբաղված աշխատակիցներին վճարման ենթակա ժամանակավոր անաշխատունակության նպաստների արտացոլում.

- ա. Դերեւ 525
- Կրեդիտ 527.

բ. Դեբետ 811

Կրեդիտ 527,

գ. Դեբետ 711

Կրեդիտ 527:

Հարց 5. Աշխատակիցներին պարգևավճարի վճարում նյութերով.

ա. Դեբետ 527

Կրեդիտ 611,

բ. Դեբետ 527

Կրեդիտ 614.

գ. Դեբետ 527

Կրեդիտ 211:

Հարց 6. Արտացոլվում է արտարժույթով արտահայտված՝ նյութերի գնման գծով կրեդիտորական պարտքի աճը արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով.

ա. Դեբետ 521

Կրեդիտ 625,

բ. Դեբետ 211

Կրեդիտ 521.

գ. Դեբետ 342

Կրեդիտ 521:

Հարց 7. Համաձայն ՀՀՄՍ 16 "Հիմնական միջոցներ" ստանդարտի, համարժեք և նույնանման մեկ այլ ակտիվի հետ փոխանակման կարգով ստացված հիմնական միջոցի սկզբնական արժեք է հանդիսանում.

ա. տրված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը.

բ. ստացված հիմնական միջոցի իրական արժեքը,

գ. ստացված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը,

դ. տրված հիմնական միջոցի իրական արժեքը:

Հարց 8. Համաձայն ՀՀՄՍ 16 "Հիմնական միջոցներ" ստանդարտի, հիմնական միջոցների մաշվածության գումարը պետք է ամորտիզացվի՝

ա. դրա օգտակար ծառայության ընթացքում.

բ. դրա տնտեսական ծառայության ընթացքում,

գ. "Շահութահարկի մասին" ՀՀ օրենքում սահմանված ժամկետներում,

դ. "ա" և "գ" կետերում նշվածներից նվազագույնով:

Հարց 9. Համաձայն ՀՀՄՍ 16 "Հիմնական միջոցներ" ստանդարտի, օգտակար ծառայության նշված սահմանումներից որն է սխալ՝

- ա. օգտակար ծառայությունը արտադրանքի այն քանակն է կամ աշխատանքների, ծառայությունների այն ծավալը, որն ակնկալվում է ստանալ (կատարել, մատուցել) ակտիվի օգտագործման միջոցով,
- բ. օգտակար ծառայությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունը ակնկալում է օգտագործել ակտիվը,
- գ. օգտակար ծառայությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հնարավոր է տնտեսապես օգտագործել ակտիվը:

Հարց 10. Համաձայն ՀՀՄՍ 7 "Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին" ստանդարտի, նշվածներից որը չի համարվում գործառնական գործունեություն՝

- ա. հիմնական միջոցների ձեռք բերումը,
- բ. հիմնական արտադրանքի վաճառքը,
- գ. հումքի, նյութերի վաճառքը,
- դ. օժանդակ արտադրանքի վաճառքը:

"2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ԴՆ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈԽԼԻ

ԽՆԴԻՐԸ

ՀՀ ռեզիդենտ ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է 2024թ.-ին: Զբաղվում է արտադրությամբ և մեծածախ վաճառքով: ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացրել:
2024թ.-ին կատարել է հետևյալ գործարքները.

Եկամուտներ

ՀՀ	Գործարքի նկարագրություն	Գումար	Պատասխան
1	Արտադրանքի իրացումից եկամուտ	28 000 000	28 000 000
2	Վերավաճառքից եկամուտ	18 000 000	18 000 000
3	Անհատույց ստացված ակտիվների իրացումից եկամուտ	12 000 000	
4	Տոկոսային եկամուտ	2 000 000	2 000 000
	Ընդամենը	60 000 000	48 000 000

Ծախսեր

ՀՀ	Գործարքի նկարագրություն	Գումար	Պատասխան
1	Հումքի ձեռքբերման ծախսեր	13 000 000	13 000 000
2	Աշխատավարձ	11 000 000	11 000 000
3	Մաշվածություն	5 000 000	5 000 000
4	Վաճառված ապրանքի ինքնարժեք (ներառյա ԱԱՀ)	12 000 000	5 000 000
	Ընդամենը	41 000 000	34 000 000

Լրացուցիչ տեղեկություն

1. Ձեռքբերված ապրանքների 50%-ը ձեռք է բերվել շուկայից, որի մասով չկա ծախսը հիմնավորող փաստաթղթեր:

Որոշել վճարման ենթական ԱԱՀ-ն և շահութահարկը:

Պատասխան

ԱԱՀ – 0, քանի որ կազմակերպությունը չի համարվում ԱԱՀ վճարող:

Շահութահարկ $(48\,000\,000 - 34\,000\,000) \cdot 18\% = 2\,520\,000$: